ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 16

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Գ. Միրիջանյանի մոտ 2018 թվականի սեպտեմբերի 24-ին կայացած խորհրդակցության

Մասնակցությամբ՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալներ — *Կ.Գրիգորյանի*, *Ա.Ղուկասյանի*

ՀՀ Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար — *Վ.Վարդազարյանի*

ՀՀ Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ — *Ա.Հովհաննիսյանի*

ՀՀ Արմավիրի մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների

ՀՀ Արմավիրի մարզպետի օգնականների և խորհրդականների

Օրակարգում

1. *ՀՀ Արմավիրի մարզում առկա հրատապ խնդիրների քննարկում:*

Քննարկվեցին՝

Հարց 1. *ՀՀ Արմավիրի մարզի սեփական եկամուտների հավաքագրման վերաբերյալ:*

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վ.Մկրտչյանին:

ապահովել ՀՀ Արմավիրի մարզում հողի հարկի և գույքահարկի գծով պարտքերի մարման գործընթացը՝ իրականացնելով ամենօրյա աշխատանքներ սեփական եկամուտների հավաքագրման արդյունավետ գործընթացն ապահովելու համար և ներկայացնել համապատասխան տեղեկատվություն:
/ժամկետ 07.10.2018թ./:

Հարց 2. *ՀՀ Արմավիրի մարզում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների վերաբերյալ:*

Հանձնարարական՝

քաղաքաշինության վարչության պետի պաշտոնակատար Ա. Հովհաննիսյանին.

ներկայացնել համապատասխան տեղեկատվություն ՀՀ Արմավիրի մարզում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների վերաբերյալ:

/ժամկետ 07.10.2018թ./:

Հարց 3. *Հայաստանի Հանրապետությունում Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովի շրջանակներում նախատեսվող միջոցառումներին ՀՀ Արմավիրի մարզի մասնակցության վերաբերյալ*

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Ս.Բուդաղյանին,

իրականացնել նախապատրաստական աշխատանքներ հոկտեմբերի 7-ից 12-ը ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովում ՀՀ Արմավիրի մարզի մասնակցության և մարզի կողմից տեղադրվող տաղավարի համար և ներկայացնել տեղեկատվություն:

/ժամկետ 07.10.2018թ./:

Հարց 4. *ՀՀ Արմավիրի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում սննդի մատակարման վերաբերյալ:*

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Ս.Բուդաղյանին:

Ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություն ՀՀ Արմավիրի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում սննդի մատակարարման համար օրենսդրությամբ սահմանված գործունեության իրականացման վերաբերյալ:

/ժամկետ 07.10.2018թ./:

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 08.10.2018 09:58:56 GMT+4

Подписано: GRIGORYAN KAREN 2212890818

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Արձ.՝ Մ.Առուշանյան.